

ՀՐԱՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ք. Երևան

N 246-Ա.

26 02 2009թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
«ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱԿԱՏՈՒԲԵՐԿՈՒՂՋԱՅԻՆ ԴԻՍՊԱՆՍԵՐ» ՓԱԿ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԲԺՇԿԱԿԱՆ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐ  
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 15-ի N 1300-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության կանոնադրության 12-րդ կետի «դ» ենթակետը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավ հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Նյու ինտերնեյշնլ բիզնես ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2008 թվականի օգոստոսի 4-ի «Պետության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման գնման պայմանագիր» N ԱՊՁԲ-08/96 պայմանագիրը՝

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Հանրապետական հակատուբերկուլոզային դիսպանսեր» փակ բաժնետիրական ընկերությանն անհատույց օգտագործման հանձնել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության Գլխավ հիմնադրամի կողմից «Տուբերկուլոզի դեմ պայքարի ազգային ծրագրի ուժեղացում» դրամաշնորհային ծրագրի շրջանակներում «Պետական գնումների գործակալություն» պետական ոչ առևտրային կազմակերպության և «Նյու ինտերնեյշնլ բիզնես ֆարմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության միջև 2008 թվականի օգոստոսի 4-ի «Պետության կարիքների համար բժշկական սարքավորումների ձեռքբերման գնման պայմանագիր» N ԱՊՁԲ-08/96 պայմանագրով ձեռքբերված բժշկական սարքավորումները:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության աշխատակազմի առողջապահության էկոնոմիկայի և հաշվապահական հաշվառման վարչության պետ Ա.Կարապետյանին՝
  - 1) ապահովել սույն հրամանի 1-ին կետից բխող ֆինանսական հաշվարկների և նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքների իրականացումը:
3. Սույն հրամանի կատարման հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարի տեղակալ Ա.Մանուկյանին:



Հ.ԲՈՒՇԿՅԱՆ

A handwritten signature in black ink, appearing to read "Հ. Բոշկյան", written over the bottom right portion of the official stamp.